

1. Երբ որք առաջ են ի հաւատա, նորա սակաւ
բաւական է, զի «Տուր, ասէ, իմաստնայն պատճառ»,
ինչ որ այլ ազգ ինչ առաւելոյն ի մարմնասիրաց,
470 ինչն տալոյն պատասխանի յանձն առաւ զայսնան
Քրիստոսի, որոց գառասխաղ երջանիկ Հարնէ, որք Հոգ-
ւոյն սրբով կարգեցին զայս ի լուսն պայծառութեան
հաւատոյ սրբոյ եկեղեցոյ Քրիստոսի լստածոյ մարդ,
475 որ աւրջնեալ է ընդ Հաւար եւ ընդ Հոգւոյն սրբոյ յաւի-
տեանս յաւիտեանց. ամէն:

Գրութեանն նկատմամբ մեր գիտողութիւն-
ները յաւերթ թուով:

(Հարմարութիւն)

* Ն. Ա.



Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՆՈՐ ԵԿԵՍՏԵՐԹՈՒԳՈՒԼՈՒՄ — ԻՐ ՏՆՐԵԿԱՆ ՀԱՎ-
ՅՈՒՆԵԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԳՇՏԱՌՈՐՆԵՐԸ:

ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔ

(Հարմարութիւն եւ Գրութիւն)

Աստուծոյ են հասարակաց

Ե Կ Ա Մ Ո Ղ Տ Ն Ե Ր Ը

Ա. Ելգեստանաց վաճառմանն եղած դրամագումար-
ներուն եւ հիմնական ստացումքներուն շահերը:

Բազ. ԲԻ.

1. Գոմարդեան Գրիգորի որբեւա- րիկն. 3810 թագ արծող այգ- ւոյն 6% շահը	228.60
2. Երեւոյն Փրանկիսկոսի 2296 թագ արծող այգւոյն 6% շահը	137.79
3. Լազար Լուգովիկոսի 2482 թագ արծող այգւոյն 6% շահը	148.92
4. Զաքարեան Փրանկիսկոսի 1065 թագ արծող այգւոյն 6% շահը	63.90
5. Միլլզէֆէն Կոստաւոսի 3891 թագ արծող այգւոյն 6% շահը	233.49
6. Զաքարեան Թովմանու 1950 թագ արծող այգւոյն 6% շահը	117.—
7. Զաքարեան Լատիսլաւոսի 2251 թագ արծող այգւոյն 6% շահը	135.09
8. Կրոս Ելքերդոսի ժառանգնե- րուն, 1000 թագ արծող այգ- ւոյն 6% շահը	60.—
9. Զաքարեան եղբարց 1600 թագ արծող այգւոյն 6% շահը	96.—
10. Իրական դրամագումար կացուցա- նող 15.604 թագին տարեկան 5% շահը	858.22

Բ. Վարձքեր, հասարակութեան ստացումքներ եւ
ուրիշ կանոնաւորեալ եկամուտներ:

Բազ. ԲԻ.

1. Սաս-Ույֆալովի երկրակալու- թեան տարեկան վարձքը	2247.50
2. Ռուսալի երկրակալութեան տարեկան վարձքը	1300.—
3. Հուստորֆի երկրակալութեան տարեկան վարձքը	872.—
4. Սաս-Երնեայի երկրակալութեան տարեկան վարձքը	1321.—
5. Կամբի, ներքին ածալմաճառի, գուարներու հանգստեան եւ փայտի մաքսը	12.011.—
6. Կլմիսարի սալլարանին տարեկան վարձքը	401.—
7. Սաս-Ույֆալովի ջաղացքին վարձքը	169.—
8. Զուխայի կոշուած լերան վրայ եղած այգւոյն տարեկան վարձքը	104.28
9. Պզտիկ Լուլայի մէջ եղած եր- կրներուն վարձքը	1100.—
10. Քաղքիս շոգեշարժ ջաղացքին տարեկան վարձքը	1002.—
11. Վարպետաց կոշուած փողոցին մէջ եղած երկրին վարձքը	42.—
12. Էոգեշարժ ջաղացքին քովերն եղած երկրներուն վարձքը	347.50
13. Մովսէս Գեորգի երկրին քով եղած պարտեղին վարձքը	32.—
14. Էրեւթմբին կտրելի խոտին վարձքը	91.—
15. Հին աղօթարանին քովի խոտին վարձքը	30.10
16. Կանեփնոցին մէջ եղած երկրին վարձքը	90.—
17. Որսի երկրներուն իրաւունքին վարձքը	17.—
18. Կլմիսարի սալլարանին վերեւ եղած արօտականին վարձքը	52.40
19. Սաս-Շարոյի սահմանին վրայ եղած երկրին վարձքը	30.10
20. Երեւոյն Զամբուն քով եղած երկրին տարեկան վարձքը	30.10
21. Կլմիսարի սալլարանին վերեւ, սահմանագիծուն վարձքը	08.—
22. Աղօթարանին կից եղած երկրին վարձքը	45.—
23. Ամերիկեան այգեստանին վարձքը	31.—

24. Հասարակութեան՝ դաշտային պահպաններուն վճարքին համար քաղած եկամուտը . . .	480.—
25. Ասֆալտ սալարկին ծախքին համար տանուադրներէն . . .	4522.—
26. Քաղքին մատններուն վարձքը	121.40
27. Հողովիակի դին եղած տան վարձքը	262.—
28. Սաս-Սէնդիվանի ճամբուն վրայ եղած տան վարձքը	25.—

Գ. Անստոյգ, կամ ոչ ապահով եկամուտներ:

1. Անտառաց եկամուտը	27.000.—
2. Դուռար ծախելու ազատացումքին եկամուտը	630.—
3. Դուռարի ազատութեան թղթին փոխանցութեան եկամուտները	1800.—
4. Հողատերերու զինուորանոցին վարձքը	4407.40
5. Ազգային հետեւակ զօրաց զինուորանոցին վարձքը	7397.92
6. Հունգարական անշարժ գրաւի եւ ստացուածոց 600 թագ արժեթղթին $4\frac{1}{2}\%$ եկամուտը	27.—
8. Քաղաքացոց՝ փոքրագոյն դատատանական խնդրոց համար եկած սպագորութեան թղթեւուն եկամուտը	71.—
9. Ազգային հունգ. զօրաց կրկնութեան տեղւոյն վարձքը	1200.—
10. Երկրատէրութիւնը վարձողներէն. ապահարկութեան տիտղոսով	575.85
11. Ցարեկան տուրքերու գրաւմանէն	257.—
12. Երկիրը վարձողներուն վաւերութեան փայտ կտրելու իրաւունքէն	60.—
13. Ազգային հետեւակ զօրաց խաչավաճառութեան տեղւոյն վարձքը	431.—
14. Արքունական ճամբաներուն շինութեանն օգնական ըլլալուն եկամուտէն	100.—
15. Տէրութեանէն — մերկրկիններուն մէջէն ազատապէս անցնիլ կարենալուն համար — օգնութիւն	512.—

Դ. Արտաքոյ կարգի եկամուտներ:

1. 1899ին օրինաց Զ. յօդուածին հետեւութեամբ՝ քաղուելի սպառման յաւելեալ տուրքէն	3480.68
2. Ոգեւոր ըմպելեաց մաքուր եւ կամտին մասնակցութեանէն . . .	1373.74
3. Յանցաւորներն՝ իրենց տեղը բռնելու վճարքին յետագարձումն	1670
4. Արհեստի սակագնէն եւ պատժոց դրամներէն	150.—
5. Երկրակալութեան վարձակալներէն 2% հրքնութեան տիտղոսով	193.14
6. Երկրակալութեան վարձակալներէն, հրկիզութեան դէմ, ապահովութեան տիտղոսով . . .	62.18
7. Յաւաքու ընէ շտեմուելի եկամուտներէն. եւ անխնայաց տարւոյն մէջ՝ ներս չեկած վարձքի պահանջումներէն	5470.—

Ե Լ Բ Ը Ը

Ա. Պաշտօնատեարց, օգնական եւ հոգաբարձու անձնքներուն թոշակը:

1. Քաղաքապետին թոշակը, 2400 թագ. — տան վարձք 400 թագ	2800.—
2. Քաղաքապետին յատուկ անձին համար վերատուրութիւն . . .	600.—
3. Պատիկանութեան վերատեսչին թոշակը 2000. տան վարձք 400	2400.—
4. Գլխաւոր քարտուղարին թոշակը, 1600 — տան վարձք 400	2000.—
5. Խորհրդականին թոշակը, 1600 — տան վարձք 400	2000.—
6. Քաղաքային բժշկին վարձքը	1200.—
7. Քաղաքային փաստաբանին վարձքը	400.—
8. Արկղակալին թոշակը 1400 — տան վարձք 200	1600.—
9. Հաշուող վերաքննիչին (revisor) թոշակը 1400 — տան վարձք 200	1600.—
10. Հաշուող վերահսկողին (controlleur) թոշակը 800 թագ — տան վարձքը 200	1000.—
12. Տէրութեան անասնաբուժին՝ քաղքին ըրած ծառայութեանը համար վարձք	840.—

13. Քաղաքային խորհրդանոցին առաջին գրադրին վարձքը 800. տան վարձք 200 —. ծառայության վերադարձում 200 . 1200.—
14. Ոստիկանության գրադրին վարձքը 800 — տան վարձք 200 1000.—
15. Արհեստագործական (exécution) վարձքը 600 — տան վարձքը 200 800.—
16. Երկու անտառի վերահսկողին վարձքը 400ական թագ — տան վարձք 100ական թագ . 1000.—
17. Քաղաքային մանկաբարձին վարձքը 240.—
18. Մեկ օրական գրադրին վարձքը 720.—
19. Ընդհ. ժողովքին օրոշուած, ու 1904ին գործադրուելի պաշտոնական վերադարձումը համար պահեստի դրամ . . . 1470.—

Ա. Զանալիցի եւ եկեղեցական ծառայից ռոճիկը.

Թագ. ԲԻԻ.

1. Ժողովրդագետին ռոճիկը . . . 1400.—
2. Ազգային եկեղեցական հիմնարկությանը տոկոսիքներուն համար՝ փրկանադրութեան տիտղոսով, քաղքին արկղին մէջ մանեկի տուրքին՝ Հայ ժողովրդագետին տրուած վերագրի վարձքը 600.—
3. Հոգաբարձութիւն թոշակն ու տան վարձքը 825.—
4. Հայ տիրացուներուն թոշակը . 504.—
5. Ժամկոյնի վարձքը 126.—
6. Եկեղեցւոյ հաստատուն եկամուտքին (fixum) իւրեւ փոխարինութիւն 315.—
7. Հատինածէս ժողովրդագետին թոշակը 620.—
8. Հատինածէս տիրացուին վարձքը 200.—
9. Հայերէն լեզուի ուսուցչին վարձքը 200.—

Գ. Դպրոցական ծախսեր:

1. Հայ կաթողիկէ հիմնարկությանը, քաղքին արկղին մէջ զետեղուած տոկոսիքներուն փրկա. նաւորութեան տիրողոսով՝ մատակարարութեան վարձքը, թեան տակ եղած աղէկանց գպրոցին տրուած վարձքը 391.44

2. Արհեստագործաց գպրոցին պահպանութեանը համար, տարուէ տարի 400.—

Դ. Ծառայից վարձքը:

Թագ. ԲԻԻ.

1. Ոստիկանաց տանպետին թուշակը 480 թագ — իւր աստիկանութեան ծառային վարձքը՝ 360) ական թագով — եւ իրաւունք ունեցողներուն 10% պայքին 192 յաւելուածը . . 3912.—
2. Ոստիկանութեան ծառաներուն համագրեստին համար . . . 920.—
3. Դիւանան մարդոցին վարձքը՝ տան վարձքով 200.—
4. Քաղքին սպասուորին (bêres) վարձքը 288.—
5. Տասը անտառապահ ծառային վարձքը՝ 144ական թագով . 1440.—
6. Երկու՝ կանթեղներն եւ միանգամայն ճամբաները մարդոց ծառային վարձքը՝ 300ական թագով 600.—
7. Աշտարակին ժամացոյցը հոգացողին վարձքը 72.—
8. Վեց դաշտային պահապանին վարձքը՝ 80ական թագով . . 480.—
9. Տասը գիշերապահներուն վարձքը՝ 120ական թագով . 1200.—
10. Սպանդանոցի ծառային վարձքը 120.—
11. Պիտոյից տեղերը մարդոցին վարձքը 200.—

Ե. Պաշտօնատէրը ի նախապետին (Pension):

Թագ. ԲԻԻ.

1. Դեօրէօգեան փրանկիսոսի թուշակը 1000.—
2. Լէկլէլեան Արպադին թոշակը 1000.—
3. Բազմուպանեան Թովսանէսին թոշակը 400.—
4. Կորոցեան փրանկիսոսին թուշակը 240.—
5. Հուլգի Լատիսլաւսին թոշակը 360.—
6. Ցերութեան ուսուցչաց թոշակաւորներուն դրամագլխին օգնութիւն 120.—

Զ. Զանալան եւսն ու ծախսեր:

Թագ. ԲԻԻ.

1. Երկու եկեղեցական եւ օրական ծախքերու 400.—

	Բազ. ԲԻԻ
2. Քաղաքապետին ճանապարհա- ծախսի	400.—
3. Գրասենեակի վերաբերեալներու	1200.—
4. Ցարական դպրոցին եւ ման- կավարժոցին շէնքերն սպիտա- կացնելու	80.—
5. Հրկիզութեան դէմ ապահովա- գրութիւն	248.75
6. Հուսարներու զինուորանոցին նորոգութեանը	1600.—
7. Ռտանաւոր զօրաց զինուորանոցին նորոգութեանը	1000.—
8. Կամուրջներուն պահպանու- թեանն ու նորոգութեանը	24.—
9. Քաղքին սահմաններն եղած ա- ռուակներուն եւ խռամբերուն պեղումը	300.—
10. Հասարակաց լուսաւորութեանը	1740.—
11. Ազգային զօրաց զինուորավար- ժութեան դաշտին համար վարձը	1190.—
12. Փողոցաց եւ հրապարակաց մա- քրութեանը համար	550.—
13. Հեռախօսի կայարանի տարեկան բաժանագրութիւնը	90.—
14. Ասֆալտ սալայատակին ծախքին տարեկան շնչումը	4153.84
15. Ասֆալտ սալայատակին դրամա- գինոյն 5% հարկը	1419.82
16. Տէրութեան վարժարանը կանգ- նելու համար՝ գործածած հիմ- նական դրամագինին տարեկան հատուցումը	2000.—
17. Տէրութեան շէտակ եւ համա- զօր (equivalent) տուրքերուն, հիւանդաց պահպանութեանը, յաւելեալ եւ երկրաբաշխու- թեան (commasation) ծախքե- րուն, — հասարակաց եւ գաւա- ռական ճամբաներու յաւելեալ տուրքերն. եւ այլն	5500.—
18. Անտառներու վրայ եղած ծախ- քերը	10000.—
19. Հարկատուին՝ անտառներու համար տուրք	1600.—
20. Հրշէջ ընկերութեան՝ օգնու- թիւն	600.—
21. Եռաշունչ շտեմուած ծախ- քերու	5000.—

Ը. Պարտականութեանց տոկոսիքը:

	Բազ. ԲԻԻ
1. Հունգարական անշարժ ստա- ցուածոց դրամասեղանին 70.000 թագ պարտքին տարեկան շնչ- ումը	3818.10
2. Պոտաւէշդի առաջին ինչորդու- թեան արկին 90.000 պարտ- քին տարեկան շնչումը	4911.30
3. Արլայի Ս. Գրիգոր լուսաւորչի որբանոցին 2000 թագ հիմնար- կութեան պարտքին տարեկան 6% տոկոսիքը	120.—
4. Գամլէրեան հիմնարկութեան 15.000 թագ պարտքին 6% տոկոսիքը	960.—
5. Յանցաւորները դուրս վարելու համար ծախք	50.—
6. Կահամոլքի ծառայութեան համար օգնութիւն	100.—
7. Զինուորներն ասպնջականելու համար վճարք	300.—

*

Տեսանք, ժամանակագրական կարգաւ, թէ որոնք էին Եղիսաբեթուպոլսոյ գատաւորները, գրեթէ իր սկզբնաւորութենէն, մինչեւ 1826. (Հատ. Ա. 475—480. Հատ. Բ. 524—532):

Հատ պակաս կ'ըլլար մեր աշխատութիւնը, եւ պարապ մեր գործքն՝ եթէ որ անոց անունները չհասցնէինք մինչեւ մեր օրերը, — Ուստի շարունակենք անոց իրարու ետեւէն եկող յաջորդութիւնը՝ առնելով քաղաքային ժողովքներուն արձանագրութիւններէն:—

Արդ՝ քաղքին գլխաւոր գատաւորն է. 1826էն մինչեւ 1831՝ Գրիգոր Դանիէ-
եան. — Նոտար Յովսէփ Զիգրեան:

1820—1832. Գատաւորի փոխանորդ Էմէրիկոս Դանիէեան: — Նոտար՝ Յովսէփ Զիգրեան:

1832—1834. Դատաւոր՝ Մարտինոս Լէնկլէեան, քարտուղար Յովսէփ Զիգրեան:

1835—1838. Դատաւոր՝ Մարտինոս Լէնկլէեան, — քարտուղար՝ Ստեփանոս Մաշ-
վելակի:

1839. Գլխաւոր գատաւոր Եւգինէոս Դանիէեան՝ փոխանակի գատաւոր Անտոն Լէնկլէեան. — քարտուղար՝ Ստեփան Մաշվելակի. քարտուղարի փոխանորդ, Յովհաննէս Գա-
րաշնեան:

1840—1841. Դատաւոր՝ Եւգենէոս Դանիէլեան, — քարտուղար՝ Ստեփան Մաշկիլակի:

1842. Դատաւոր՝ Եւգենէոս Դանիէլեան, — գլխաւոր քարտուղար՝ Ստեփան Մաշկիլակի. օգնական քարտուղար՝ Յովհ. Էօզլէշ:

1843—1844. Դատաւոր՝ Եւգենէոս Դանիէլեան, — քարտուղար՝ Ստեփան Մաշկիլակի:

1845. Դատաւոր՝ Եւգենէոս Դանիէլեան, — գլխ. քարտուղար՝ Ստեփան Մաշկիլակի — օգնական քարտուղար՝ Ստեփան Չիգիկան:

1846, 1847, 1848 եւ 1849 թարձանագրութիւնները մինչեւ հիմայ չգտանք: — Ո՞ր գիտէ 1848 թ խառնակութեանց օրերն ուր գրուեցան ու տարուեցան:

1850. Դատաւոր, Յովհաննէս Խորբեան. — քարտուղարի փոխանորդ՝ Յովսէփ Եօզլէշի:

1851. Դատաւոր՝ Յովսէփ Վոյճեան. — քարտուղարի փոխանորդ, Ղազարոս Չիգիկան:

1852. Դատաւոր՝ Յովսէփ Վոյճեան. — գլխաւոր քարտուղար՝ Աստուածատուր Եօզլէշեան: —

Ասիից ետքն, արձանագրութիւնները՝ մինչեւ 1872, գիւնատան մէջ գտնել չկարենալով՝ կը հարկադրինք. Ղուկ. Աւետիքեանի՝ Եղիսաբէթուպոլսոյ մնացորդութեան, թուելը գործածել. որ շատ անապահով են:

Արդ՝ ըստ Աւետիքեանի, 1850—1851, քաղքին դատաւորն է՝ Յովհ. Խորբեան: — 1851—1855. Յովսէփ Վոյճեան: — 1855—1860. Յովսէփ Պիլց: — 1860—1861. Աստուածատուր Դուրիճան: — 1861—1875. Յովհ. Գարաշնի: — Խնչպէս ըսի, աս թուերը՝ չէ՛ թէ միայն անձիշդ են, հապա նաեւ անհասկընալի: —

Քաղաքային ժողովքներու արձանագրութիւնները 1872էն առջին գտած եմ գիւնատան մէջ: — Ըստ այսմ:

1872ին քաղքին դատաւորն է, Յովհաննէս Գարաշնեան. — քարտուղարի փոխանորդ՝ Անտոն Եօզլէշի:

1873. Քաղաքապետ Յովհ. Գարաշնի. — քաղաքապետի փոխանորդ՝ Ղազարոս Չիգիկան: — Գլխաւոր քարտուղար՝ Լուգովիկոս Կորովէ. քարտուղարի փոխանորդ՝ Յովսէփ Եօզլէշի:

1874. Քաղաքապետ. Յովհ. Գարաշնի. — քարտուղար՝ Լուգովիկոս Կորովէ:

1875—1876. Քաղաքապետ՝ Ղազար Չիգիկան. — քարտուղար՝ Լուգովիկոս Կորովէ:

1877. Քաղաքապետ՝ Գրիգոր Դոմինջեան. — քարտուղար՝ Լուգովիկոս Կորովէ:

1878—1883. Քաղաքապետ՝ Գրիգոր Դոմինջեան. — քարտուղար՝ խաշիկ Սէնգաբէրեան:

1884—1887. Քաղաքապետ՝ Յովսէփ Եօզլէշի. — քարտուղար՝ Մարտինոս Լէնկյեան:

1888—1889. Քաղաքապետ՝ Մարտինոս Լէնկյեան. — քարտուղար, Յովհ. Կորովէն:

1890—1891. Քաղաքապետ՝ Մարտինոս Լէնկյեան. — քարտուղար՝ Յովսէփ Չիգիկան:

1892ին. քաղքին քաղաքապետն է, մինչեւ յուլիսի սկիզբը՝ Մարտինոս Լէնկյեան: — Ասիից մինչեւ յուլիս 18ը, քաղաքապետի տեղապահ՝ Գեորգ Բէրսիան: — Դեկտ. 3ին քաղաքապետ կ'ընտրուի՝ Պաւղոս Սորվտի: — 1892ին, մինչեւ յուլիս 21 քարտուղարի տեղապահ է՝ Արպագ Լէնկյեան. — մինչեւ սեպտ. 12 քարտուղար՝ Փրանկ. Բօքեան, — սեպտ. 12ին գլխաւոր քարտուղար կ'ընտրուի Ատալբերգոս Բոգոբնի:

1893. Քաղաքապետ՝ Պաւղոս Սորվտի. — քարտուղար՝ Ատալբերգոս Բոգոբնի: — Հոկտ. 18ին քաղաքապետի տեղապահ՝ Էմիլիոս Պոգորշ: — Քաղաքապետ կ'ընտրուի՝ հոկտ. 19ին Յովհ. Դրայանովիշ:

1894—1904. Քաղաքապետ՝ Յովհաննէս Դրայանովիշ — քարտուղար՝ Ատալբերգոս Բոգոբնի:

* * *

Գործքս վերջացուցած ու գրիւս վար դրած ատեն — երկասիրութեանս վերջին հատորին ներածութեան մէջ՝ ըսածիս հաւատարիմ մնալով՝ — կ'ուզեմք մեկնութիւնը տալ, թէ ինչու համար Եղիսաբէթուպոլսոյ ազգայինները հիմա՛յն այն աստիճանի նուազած, ազգայնութեան ոգին կորսնցուցած, ինչպէս ու փճացած են:

Ձարմանալի ու անըմբռնելի կ'երեւայ առաջին հայեցումներին՝ այն արտաքայն կարգի փոփոխութիւնն, այն տարբերութիւնը՝ զոր քիչ մը մտածելէ ետեւ կը գտնեմ մարդ, երբ համեմատեմ Եղիսաբէթուպոլսոյ նախին բնակիչները՝ հիմակուաններուն հետ: — Յարբերութիւն բարոյից ու սովորութեան, տարբերութիւն գործունեայ կենաց ու աշխատասիրութեան. տարբերութիւն ձեռնարկութեան ու վաճառականութեան ոգւոյ, տարբերութիւն՝ աստուածապաշտութեան ու հաւատքի:

դատմութեան թերթերը դարձնելով՝ այսուան ազգայինները հազիւ կրնանք ճանաչել, — դարձեալ թէ ան ազգը չէ. ան ժողովուրդը չէ:

Աս բոլորական փոփոխութեան, աս վերջի աստիճանի կերպարանափոխութեան ձեռք, Եղիսաբեթուպոլսոյ հայ ժողովուրդը՝ եղաւ կես մ'եւրոպական ու կես մ'արեւելեան ժողովուրդ. որով՝ աւելի արագընթաց քայլերով գա-հասկեցեալ դեպի իր կործանումը:

Բայց ինչ են արդեօք՝ այս փոփոխութեան, այս գահաժլտման պատճառները:

1. Հայոց ազգը՝ ի ընդ վաճառական ազգ մըն է: Առեւտրի ծնած հոգին՝ վաճառողներ, նաւահանգիստներ կը փնտռէ: Իր գործունէ մտքին համար հեռու տեղ չկայ: Իր անհանգիստ ոգւովը կ'երթայ, կը պտուի, որպէս զի իրեն վաճառանոց ու առեւտրի նիւթ գտնէ: — Աս ընդհանուր ըսածնիս, յատկապէս ստուգեցաւ Եղիսաբեթուպոլսոյ ազգայնոց վրայ: Բայց ի վնաս եւ ի կործանումն: — Կես դարէ մ'աւելի է որ (1848էն յառաջ) աս քաղաքը դեռ ծաղկեալ վաճառականութեան կենդանի ու մեծ հեղինակութիւն ունեցող տեղ մըն էր: — Իրեն երկու դարցի մեծ քաղաքները — Մետիաշ ու Շիկիշվար — զորոնք գերազանցած էր իր առեւտրովն եւ ունեւորութեամբը՝ սկսած զարգանալ, իրեն հետ միջիլ եւ զինք կամաց կամաց նաեւ գերազանցել, 1848ին աղետալի օրերուն պատահարները վրայ գալով՝ զինք կործանման ծայրը հասուցին: Ուսկից մէյ մ'ալ չկրցաւ սթափիլ: — Եւր ժողովուրդն՝ ամեն ունեցածն զրկուեցաւ, եւր բոլորովն աղքատացաւ, Եղիսաբեթուպոլսոյ մէջ՝ ալ յառաջանալ ու ապրիլ չկարենալով՝ իր օրական հացը գտնելու համար, բազմութեամբ սկսաւ քաղքէն հեռանալ: — Բաց ասկէ՝ կես մը վաճառականութիւն ընելու, կէս մը ուսում սորվելու համար, ուրիշ տեղերը գողթեց: Բայց գոբախտ հեռուութիւնն ստուգեց, թէ քաղքէն հեռացողներուն մէկ մասն ալ եւ չգարձաւ. բացած տեղը ծնաց: Ասով բնականապէս քաղքին բնակիչները նուազեցան: — Ուստի՝ կէս մը բախտ փորձելու, կէս մը առուուոր ընելու, կէս մը հաց գտնելու, կէս մըն ալ ուսում սորվելու համար, մէյ մը քաղքէն հեռացողը՝ շատ փափաք ջոցոցոց նորէն իրեն ծննդեան տեղը վերադառնալու: — Եւ ոչ առանց պատճառի: Որովհետեւ Եղիսաբեթուպոլսոյ մէջ վաճառականութիւն ընելու աս-

պարեզն՝ իրեն համար դարձած էր: Իսկ իրեն պաշտօնատէր, կամ ուսուցիչ, կամ բժիշկ՝ ողորմելի ու նուազ վճարք ունեցող պաշտօնով չէր կրնար շատանալ, եւր՝ օտար ու մեծագոյն քաղքի մը մէջ՝ բարձրագոյն պաշտօն կրնար ընադուսիլ, մեծագոյն թոշակով:

2. Եղիսաբեթուպոլսեցւոց անկածութեան ուրիշ պատճառն է, անշուշտ, զօտարներն անհասի սիրելն ու անոնց հետ սատակի սիրով հաղորդութիւն ու խնամութիւն ընելու փափաքիլը: Ասով՝ հոծ միութիւնն ու ազգայնութեան ոգին բնականապէս քայքայեցաւ ու տկարացաւ: Ուստի հոն՝ ուր կը պակսի կապն, որ մեկուկէ թէ մերձաւորներու եւ թէ հեռաւորներու հետ միացնէ: — Եւր կը պակսի զսպանակն, որ ազգայնութեան ոգին վառ պահէ, յայտնի է թէ հոն ազգութեան զգացումն ու ոգեւորութիւնը կը տկարանայ: — Ուր թողուք զայն ալ, որ խնամութեան ձեռք — բնութեան օրինաց հետեւութեամբ — տեղացիք, ըստ մասին քաղքէն հեռացան ու ըստ մասին եղան օտարազգի: — Հասարակօրէն, պղտիկ ազգը՝ մեծին մէջ կ'ընկզմի, անոր մէջ կը կորստի, ու անկէ կը կլուտի: — Ազգային աղէթի մը, հուշգարացւոց հետ ամուսնանալով — հուշգարական օրինաց համեմատ — իր ազգայնութիւնը կը կորսնցընէ:

3. Եղիսաբեթուպոլսեցւոց ազգայնութեան ոգեւոր ու լեզուին կորսուելուն վրայ առանց ազգայնութեան շնաց Վնեստոյ Մխիթարեանց՝ ձեռք քաշելը: — Ծորափ Մխիթարեան հարց դարոց ունէին Եղիսաբեթուպոլսոյ մէջ՝ աղաք հոն, քիչ շատ հայերէն կը սորվէին, կը լսէին, ու կը խօսէին: Բայց եւր յարաբերութիւնները փոփոխեցան՝ պատուական հայերը կամաց կամաց մէկդի քաշուեցան: — Եւ ուր որ Մխիթար արքայօր մահուանէ քիչ մը ետքը՝ վեց եօթը անձիւք կային, աս թիւը կամաց կամաց նուազեցաւ. եւ 1848էն ետեւ հազիւ մէկ երկու հոգի թողուցին հոն: Ասոր վրայ դպրոցնին բացուեցաւ: — Ասկից ետքը՝ անշարժ ստացուածներն ալ ծախեցին, ունեցած անելին օտարացուցին ու վանաւան մեծ մասը վարձու տուին: Միով բանին՝ ազգին հաւնեցած յարաբերութիւններն գրեթէ բոլորովն կորցին: — որով՝ ազգն ու ազգայնութեան ոգին՝ քիչ հարուած չընդունեցաւ:

4. Աշխարհական քահանայք՝ հայերէն լեզուին ուսումը սորվելու շատ անհոգ եղան: Աս բանս հետահետոյ այնչափի հասաւ, որ մեր

օրերը՝ հազիւ աստուածային պաշտաման ամենէն հարկաւոր կտորները քիչ մը կը հասկընան:

Կրնանք իրաւանք իրենց վրայ պատշաճեցնել, ինչ որ ըստ իր ժամանակին, լէւպէրկի եկեղեցականաց համար — «խօք միթարու թեան առ Եւգոփիացիս» — մատենագիրը, «Քահանայք... անվարժք (որպէս եւ ժողովուրդն) լեզուին Արամեան, որպէս երբեմն գրեաց ոմն»:

Իսկ քահանայք որ ի Լով կան.

գոռող, յանգուգն, ամաւարտաւան,

ըռ տմբք են սքա Տաւան,

չտեսի այլուր սոցա նման:

Չգիտեն ընաւ զսահման ուսման.

եւ ոչ իսկ զլեզուն շայկեան:

Ջոր ընթեռնուն ոչ հասկանան.

եւ գիտողաց վերայ խրոխտան:

Ասոր բնական հետեւութիւնն ան է, որ շին կրնար հայու պէս մտածել ու զգալ: Ուստի սիրու, հոգի ու կարողութիւն չունին զժողովուրդը յորդորելու եւ քաջալերելու որ ազգայնութեան ոգին, ազգային լեզուն սորվին ու պահեն: — Ուր թողունք զան ալ, որ զլեզուն չհասկընալուն, եւ կամ, ազգին աստիութիւն ու նենալուն — շինք գիտեր — հայերէն եկեղեցական լեզուն՝ հունգարերէնի փոխեցին: Ուստի՛ այսօր, չէ՛ թէ միայն եկեղեցական երգերը՝ հունգարերէն կը լռուին, հապա նաեւ խոր հուրերը՝ հունգարերէն լեզուով կը կատարուին: — Յայտնի է թէ, այսօրիս բաներն, առանց ազդեցութեան շին ազգային զգացմանց վրայ:

Աս ամէն բան, գուցէ անկէ կրնայ յառաջ գալ, որ քահանայից մէկ մասը՝ շատ միտեալ է լատինականութեան: Մտենալ ու քուտիլ կ'ուզէ լատին եպիսկոպոսին, որպէս զի առջեւը սիրուած անձ ըլլայ. եւ անկէ եկեղեցական աստիճան ու բարձրագոյն պատիւ մ'ընդունի: — Գիտցողները գիտեն, թէ լատին եպիսկոպոսը շատ դժձ է, ու դիւրութեամբ կը թողու —

մանաւանդ թէ անուղղակի ճամբաներով ու միջոցներով կը գործէ — որ ազգային պատանիները, լատին եկեղեցւոյ անդամ ըլլան ու լատինածէս քահանայ ձեռնադրուին: — Դրժաբախտ իրականութիւնը կը վկայէ թէ այսօրուան օրս՝ Դրանսիոյ մէջ՝ շատ աւելի է հայազգի լատինածէս քահանայից՝ քան հայածէս քահանայից թիւը:

Ու ասոր վրայ շատ զարմանալու չենք: լատինածէս քահանան, կրնայ զանազան եկեղեցական աստիճանի ու թոշակի հասնիլ. ուր որ հայածէս քահանայից առկա է՝ որեւէ եկեղեցական աստիճանի բարձրանալու գուռը գոցուած է: Ասոնց՝ եկեղեցական պատուոյ հասնելու բարձրութիւնը՝ կը տարածի միայն մինչեւ ժողովրդագիտութիւնն ու աւագերիցութիւն: Ասոր ալ հասնելու ան տան կրնայ յոյս ունենալ, երբ չորս ժողովրդագիտներէն մէկը՝ բարբախտութեամբ վախճանի. ու ըստ պատահման, ինք ընտրուի անոր տեղը ժողովրդագիտ: — ապա թէ ոչ, ըստ սովորութեան կը ծերանայ ու կը մեռնի՝ իրեն օգնական քահանայ: — Ասանկ զօրաւոր՝ ու միայն Աստուծոյ ծառայելու հոգի, չունի ամէն եկեղեցական անձ:

Ե. Մեր պատմութեան ընթացքին մէջ շատ տեղ գաղափար ռենդանք եղիսաքնութեան պոլսոյ թէ՛ հարկաւոր ժողովին, թէ՛ քաղաքային խորհրդին ու թէ՛ քաղքին ամէն պաշտօնատէրներուն վրայ: Յետեւ միանգամայն թէ ասոր առանց բացառութեան խոգային մարդիկ էին: Հայազգի էին նոյնպէս քաղքին ուսուցիչները, բժիշկներն, ոստիկանութեան ու քաղաքային ծառաներն ու սպասաւորները: — Ասոնց մէջ ան աստիճանի գրոշմուած էր ազգայնութեան ոգին, որ չէ՛ թէ միայն հասարակաց կենաց՝ հապա պաշտօնական ինչորոք մէջ ալ գործածած լեզունին հայերէն էր: Ու իրենք՝ մայրենի լեզունին գիտնալէն ու խօսելէն զատ, կը յորդորէին զօտարազգիներն ալ, հայերէն խօսելու: — Ճանջած ենք, Եհր հունգարացիներն ու մանաւանդ վալաքներ, որոնք հայերէն ընթերցելի կը խօսէին — յայտնի է թէ առ տեղաց բարբառով: — Ան պաշտօնատէրներն, ան ուսուցիչները գալցին, վախճանեցան: Իրենց տեղն եկողներն, իրենց պաշտօնը բռնողներն՝ եղան օտարածիմները: — Աս վերանորոգութիւնն, ազգայնոց անհոգութեամբն այնչափի հասաւ, որ այսօրուան օրս, չէ՛ թէ միայն քաղաքային ամէն պաշտօնատէրները — մէկ երկու հոգի գուրս առնելով — օտարազգի են, հապա նաեւ քաղ-

¹ Մեր ակամօքներէ իսկ ըսած ենք եկեղեցւոյ մէջ քահանային բերելն ասանկ բաներ, «Բան տեսնութեան եղին ի վերայ իմ» — Ի պատիւ հոգեպաշտեան Յեռան մեղք Յիսուսի քրիստոսի: — Որդի Ամենի Բարթոլոմէոս կոչը: — Պահեստին զարմատ (այսինքն՝ զարմախ) մեր յորդանոց: — Որ զորթն հոգեւոր որդւոյ (փոխանակ պղպոյ) քոյ: — Եթէ ոչ վատ բարեկամութեան: — Ջհանգիստ յախտնական պարգեւեա նորա Յեր. եւ այլն. եւ այլն: — Ըն, ըն, թէ, թէ, թէ, փս, փս, նի, նի, նի, նի, կարգարն ու զանազանք ան գիտութիւն է:

